

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԱՐԱՆԻՔՆ ԸՍՏ ՆԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՆՆ. ՃՈՒՂՈՒԹՅԱՆԻ

Նարություն քին. Ճողություն (1864-1938 թթ.) գյուղագրական հարուստ ժառանգության մեջ առանձնանում է «Շիրինանց Նախշունը»¹, որը բնութագրվում է որպես **ազգագրական վեպ**, քանի որ «...գյուղագրությունը ինչ-որ փեղ աննկարելիորեն վերածվում է ազգագրության»²: Վեպի առաջաբանում հեղինակը հստակ կերպով ձևակերպում է աշխարհային նպատակը. լինել հայրենիքի սրբազան վայրերում, փսնել գյուղական կյանքի **բազմաբարձ** իրականությունը, շփվել գյուղացու ուրախություններին ու ցավերին, ուսումնասիրել, գրի առնել, կորստից փրկել ժողովրդական գրական գանձերը և հայ գրադարանի սեփականությունը դարձնել: Ի պաշտոնի շրջագայելով փարբեր վայրերում և մոտիկից շփվելով գյուղական կյանքի դաժան իրականությանը, նա իր վեպերի ու պատմվածքների հիմքում դրեց իր իսկ կողմից ԺԹ դ. վերջերին և Ի դ. սկզբներին գրառած դաշտային ազգագրական նյութերը, սրելով դեպի չափազանց արժեքավոր գործեր:

1899 թ. նա հրապարակեց բացառապես ազգագրական բնույթի աշխարհային³, այնուհետև՝ պատմվածքների մի ամբողջ շարք: Չնայած նրա պատմվածքներում քիչ են գուր **ազգագրական պատկերները**, սակայն դրանք հարուստ են ժողովրդական բանահյուսության գոհարներով, որոնց դուրս բերումն ու փխպարանումը կհարստացնի հայ բանագիրությունը շուրջ մեկ ու կես դարի վաղեմություն ունեցող ազգագրական նյութերով: Պատահական չէ, որ Մելքիսեդեկ արքեպս. Մուրադյանը ստանալով «Մոռացված աշխարհ» գիրքը, գրել է. «Կարդացի մեծ հաճությամբ, այն բարբառը, սովորությունները, առածները, դարձվածքները ...նորոգեցան, կենդանացան... փամկացուցին աչքերս արքայապետով:

Կ'օրինում գձեզ հայրական սիրով... աշխարհեք և գրեցեք ինչ որ հայրենակացն է»⁴:

Վերջին տարիներին բավական շատ են գրվել հայոց ավանդական հարսանիքի վերաբերյալ գուր ազգագրական աշխարհայիններ: Սակայն նույնիսկ չեն հիշարակել Ն. Ճողությունի անունը, որի աշխարհային եզակի սկզբնաղբյուր է ավանդական հարսանյաց փուլերի, ծիսական արարողությունների վերաբերյալ:

Ազգագրության մեջ ընդունված մեթոդաբանությամբ, հարսանյաց ծիսակարգն ուսումնասիրվում է երեք հիմնական փուլով. նախահարսանեկան, բուն հարսանեկան և եր հարսանեկան, որոնք իրենց հերթին բաժանվում են մի շարք ենթափուլերի: Ն. Ճողությունը դրանց անդրադարձել է անհամաչափորեն և ոչ հստակ ստորաբաժանումներով: Նրա աշխարհայիններում եղած վկայությունները թույլ են տալիս հայոց ավանդական հարսանյաց ծեսերն ու արարողությունները ներկայացնել միայն նախահարսանեկան և բուն հարսանեկան փուլերով:

1 Յարություն քահանայ Ճողություն, Շիրինանց Նախշունը, Թիֆլիս, 1911:

2 Կ. Դանիելյան, Նայ գյուղագրությունը 19-րդ դարում (1860-1890), Եր., 1973, էջ 298:

3 Տե՛ս Յարություն քահանայ Ճողություն, Աղա սուրբ Մարգիսը և Մալաք փափի հաապը, Թիֆլիս, 1899:

4 Ն. Ճողություն, Մոռացված աշխարհ, Եր., 1968, Առաջաբան, էջ 4:

Նախահարսանեկան փուլ. Լայն իմաստով սա ներառում է ընտրության, խնամախոսության և նշանադրության ցիկլերը: Ն. Ճուղուրյանը լավ էր հասկանում, որ առանց մեծ ընտանիքների թեկուզև համառոտ նկարագրության, հայոց ավանդական հարսանիքի պարկերը թերի կլինեն: Նա ունի ուշագրավ դիտարկումներ ԺԹ դ. երկրորդ կեսին, երբ դեռևս պահպանվել էր **օրորոցախազի սովորույթը**⁵, որի մասին Ն. Ճուղուրյանը գրել է. Նախշունի փայրը «Ըստ հին ավանդության, խր թռռան օրորոցումն էր նշանել Մարանանց Թ-առանի ծնունդի փողայի հեպ»: Պառավներն իրար ազնիվ խոսք էին փոխել. եթե հարադ փղա ծնի, անունը Մանաս դիր, «Նախշուն թռռանս իրան հմ փալու»: Սակայն, փղան ուշ լույս աշխարհ եկավ, որի պարծառով 18 փարեկան Նախշունը **նշանված էր 12 փարեկան Մանասի հեպ**, որը սիրո մասին ոչինչ չգիտեր: Մինչդեռ, Նախշունի մասին ասում էին, երեկ այն օջախին, որ պիտի մրնես, կեսրարի ու կիսուրի ձեռքերին «...ջուր պիտի ածես, որոնց ուրբը լվանաս, որոնց փողը պիտի ձգես ու թևները քաշես»⁶:

Այս համառոտ նկարագրի մեջ, Ն. Ճուղուրյանն ընդգծում է գերդաստանում ապագա հարսի պարտականություններ, որոնք փոխանցվում են սերնդից-սերտու:

Ավագենց գերդաստանի ներքին գործերը փայտի ձեռքին էին, երբ նա մահացավ, նրա իրավունքներն անցան մեծ հարսին՝ Մարիամին, որն օջախում մեծ դեր էր կատարում «... ըստ ավանդական կարգի ու սովորության: ...բոլոր հարսների ուղեցույցն էր, նա էր կազմակերպում և բաժանում փան աշխատանքները: ...բոլոր երիտասարդների համար աղջիկ հավանում, նշանում ու հարսանիք պարտաստում»⁷:

Այսպես Ն. Ճուղուրյանը ոչ միայն փոխել է ընտանիքում մեծ մոր գործառնությունների շրջանակները, այլև՝ նրա մահից հետո, ըստ սովորության իրավունքի, դրանց անցնելն ավագ հարսին:

Ըստ Ն. Ճուղուրյանի՝ մեծ ընտանիքներում **չխոսկանությունը** բավական փարածված էր, կինը «...երեսը համարյա ծածկել էր և չխոսկանության պարծառով մի երեխի կոնակն առած, նրա բերանով էր ասում յուր գանգալը»⁸: Կեսրարի, քալորի հեպ չխոսկանությունը դեռևս կենսաուսակ է նաև այսօր՝ հարկապես գյուղական բնակչության մեջ:

Ն. Ճուղուրյանն անդրադառնում է նաև մեծ ընտանիքներում պահպանված **բեղով ու մորուքով** երգում փալու կարգին, որը վիճելի հարցերը քննարկելիս, հանդես էր գալիս որպես երաշխավոր: Եթե իմ ասածը չանեմ,- ասում է պարմվածքի հերոսը,- թող «Էս բեղերս ըստի չլեն, այ ստի», բեղերը ցույց փալով պարծեցավ նա⁹:

Գերդաստանական մնացուկ էր նաև երիտասարդների առնականությունը **քյոթուկ** կոչվելու վրա փորձելու կարգը: Նարեան փայտահալը բոլոր երիտասարդներին հավաքեց մեկի բակը,- գրում է Ն. Ճուղուրյանը,- ուր ընկած էր **մի խիլ ու ճիլ քյոթուկ**, որի

5 Ն. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 10: Ե. Լալայանն անդրադառնալով օրորոցախազի սովորության, գրել է. երկու մարեքիմներ բարեկամանալու նպատակով «...խազում են օրորոցների լծերը (միջնափայտ), իբր նշան, որ երեխաներն արդեն նշանադրված են...Օրորոցախազի նշանադրությունը կատարվում է նաև այն դեպքում, երբ մեկի որդիները սովորաբար չեն ապրում, հոսալով, որ նշանածի փալսը կարող է ապրեցնել երեխային՝ շուրջով նշանում են նրան» (տե՛ս Ե. Լալայան, Բորջալուի գավառ. Երկեր հինգ հատորով, հ. 3, Եր., 2004, էջ 122):

6 Յ. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 10:

7 Անդ, էջ 32:

8 Ն. Ճուղուրյան, Պարիկի կինը. Մոռացված աշխարհ, էջ 11:

9 Ն. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 21: Նման. Ղ. Աղայան, Նուշագրություն. ԵԺ չորս հատորով, հ. 4, Եր., 1963, էջ 282-283:

վրա չարչարվում էին կացինով, բայց չէին կարողանում կտրել: Նրանցից մեկը «...Նագիկի սիրով անողոր կռիվ հայտնեց քյոթուկին»: Քյոթուկը նրա առջև սարսափում էր, լավեց «Նախարարողի առավոտվա անուշ կորկոտն ու քյաշկեն (ընդգծումները՝ Ա. Պ.) հալալ լինի քեզ»¹⁰ գովեստի խոսքերը:

Ն. Ճուղուրյանը ուշագրավ վկայություններ ունի մեծ ընտանիքներում հաճախակի կատարվող **բռնի ամուսնությունների** մասին: Նագիկի ծնողների համար աղջիկը կարծես «երինջի նշանակություն ուներ», որ երբ ցանկանային փոխելին կամ վաճառելին: Նաճախ աղջկան բան չեն հարցնում, որի պարճառով քանի մանկահասակ աղջիկներ են գոհ դառնում ծնողների՝ «Մենք որ փանք, աղջիկն ինչպես կհամարձակվի ասել, թե չեմ ուզում» խոսքերին¹¹: Այս պայմաններում բռնի ամուսնության դեպքերը քիչ չէին, սակայն քիչրապես երկու սեռերի փոխադարձ համակրանքի վրա կայացած ամուսնություններն էին, որի լավագույն օրինակը Կրկնը՝ Ն. Ճուղուրյանը:

Երբ Արեւի հորեղբոր կինը՝ Մարիամը խոսում է նրա ամուսնական մասին և լսում, եթե «արժանի եք փեսուն՝ Նախշունին», որին ընտրել եմ, կամուսնանամ, խոսքերը, ասում է. կանչեք **պապին ու բիձուն** և մեր բարեկամներին, որ հայտնենք Արեւի ընտրության լուրը¹²:

Ավագենց ու Շիրինենց գերդաստաններում «լիքն էին ճերմակահեր ծերերն ու պառավները, որոնց ողջ գլուղն էր խոնարհվում»: Նավաբված հարազատները ցանկանում էին Արեւի «կարմիրն էլ շուրով կապել», սակայն հարսին ընտրելու առաջնահերթ պատիվը վերապահվում էր Ավագենց գերդաստանի ամենից փառեցին՝ Վարդան պապին, որից հետո մյուսները կասեին իրենց կարծիքը: «Օրհնությունից ավելի ուրիշ բան չունեմ,- ասում է Վարդան պապը,- թող փերը Արեւին մի հալալ ծծկերի պատահեցնի, ու բարի վայելումն փառ»: Դրանից հետո միայն, մյուս ծեր կանայք ու փղամարդիկ դիմում են Մարիամին, թե «հարսնացու ջոկելն ու գրնելը կնիկարմարի բանն է»¹³: Ըստ մեծ հարսի՝ «քոթրիս հավանաձեռն է լավը», սակայն երբ քննարկում են փարբեր ընտանիքների աղջիկներից հարսնացու ընտրելու խնդիրը, բացվում է մասնակիցների կարծիքների ու պարճառաբանությունների մի ամբողջ շարք. մեկի «ջինսը լավ ջինս չի», մյուսին մերժում են, որովհետև մերն ու փարբեր երկու գավակից ավել չեն ծնել, երրորդին՝ քանի որ նրանց փոխում չեր կին է եղել, «անպարտոլ կնիկն ինչի է պերբ» պարճառաբանությամբ, այդպիսով **ջնսումը** լուսնուր, քաջալ, ծույլ մարդ կա և այլն¹⁴:

Երբ ընտրությունն արված էր, անհրաժեշտ էր սպանալ գերդաստանի մեծի՝ Վարդան պապի օրհնությունը: Նա հետաքրքրվում է, թե այդ աղջիկը մանկ, գգկ, կարել, կթել, թխել գիպի, թե ոչ: «Միամիտ կաց պապի ջան, քեզ ծառայելու, ոտդ ու գլուխդ լվանալ էլ պարտապարհ է»: Վարդան պապը օրհնում է կատարված ընտրությունը. «Թող ծաղկեն, ծլեն ու

10 Ն. Ճուղուրյան, նշվ. աշխ., էջ 151-152: Նագիկի համար պայքարող մյուս երիտասարդին չի հաջողվում այն իրագործել, դառնացած ասում է. «մի քյոթուկ ճղելու համար ... իմ խոսքը փակը գցեցին» (Կրկն Ն. Ճուղուրյան, Խեչոյի կղզուց: Մոռացված աշխարհ, էջ 151-152, 157):

11 Անդ, էջ 155-156:

12 Ն. Ճուղուրյան, Շիրինենց Նախշունը, էջ 33:

13 Անդ, էջ 36-37:

14 Տե՛ս անդ, էջ 37-38:

պարզեն եւ անհատ փայ ուրեն աշխարհիս մեջ: Ծառո միշտ ծաղկի եւ արքո կանաչի»¹⁵, խոսքերն է ուղղում Աբելին:

Երբ աղջկա ընտրությունն արված էր գերդասարանի մեծերի համաձայնությամբ եւ վճիռն օրհնված, անցնում են հարսնախոսի գնացողների խնդրին: Մերժվում է գերդասարանի փղամարդկանց ընդգրկելն այդ խմբում, հարսնախոսությունը փղամարդու բան չի պարճառաբանությամբ: «Տղամարդն ինչ գործ ունի, հարսնախոսը կնիկ արմարինն ա»¹⁶: Որոշվում է երկու պառավների ուղարկել հարսնախոսի եւ որպես նշան վերցնում են արծաթե հասարակ մի մարանի, որը «Ավագենց շար հարսնացուների մարից մար անցնելով, հիմա էլ անցնում էր Նախշունին»¹⁷:

Աղջկա քանը լսելով հարսնախոսության գալու լուրը, հիշում են քապի գծած օրորոցախազի մասին: «Բա որ քապը Մարանանց խոսք ա քվել, նրանց ի՞նչ ասենք,- հիշեցնում են հարսները: Կարկուրս Մարանանց փնթի գլխին, ինչիս է պէտք մանուկ փեսան»¹⁸, պապախանն է հնչում:

Երբ երկու քարեց կանայք մեկնում են աղջկա քուն, նրանց դիմավորում են «խեր ու բարի լինի գալներդ» խոսքերով, որին հեպեում է «Աստված ձեզ խեր ու բարաբայություն պահի» պարասխանը: Նշանախոս ենք եկել գիշերը, որ ոչ որ չիմանա, որովհետև ցերեկով գալն աչքի համար լավ չի¹⁹:

Աղջկա կողմը եւս մրախոգված էր. «...քան մեծ նանի կամքն էլ լինի, նրա խաթրն էլ առնենք», ուստի հրավիրում են նրան: Աստված անփոշման անի, եթե Աբելին են ուզում, թող անուպարճառ նշան վերցնեն,- ասում է քապը²⁰: Համաձայնության գալուց հետո, քան քերերը պառավներին հրավիրեցին **մի կտոր իրիկնահաց անուշ անելու**: Մի բաժակ օղի խմեցին «ուրիս բարին, ձեր շնորհի բարին» մաղթանքով եւ դուրս գնացին: Նշանախոսների գնալուց հետո, Նախշունին հարցրին, իմացա՞ր ինչի համար էին եկել պառավները, քեզ համար էին եկել, աչքդ լույս²¹:

Երկու կողմերի համաձայնության գալուց հետո, քապի ընտանիքը պարբերաբարվում էր **նշանադրության**: Նախապես, նշանի գաթայի խմորն էին հունցում,- գրում է Ն. Ճուղուրյանը,- «Մի խոնջա գաթայով, մի շիշ օղիով, արծաթե մի հասարակ մարանիով ու պոժոժներով գնում էին աղջիկ ուզելու»²²: Նշանադրությանը ընդունված էր խնամքների քուն գինի քաններ: Տղայի կողմը իրավունք ուներ մինչև 30 մարդով մեկնել, իսկ նշան քարեքի ժամն ու ժամանակը, որպես կանոն, շաբաթ երեկոն էր²³:

Երբ նշանադրեք գնացողները նախապեսված իրերը բարձել էին աղջկա հայրական քուն քանելու, Ավագենց հարսները քվեցին իրենց պարբերաբարաները. մեկը մի քանի

15 Անդ, էջ 40:

16 Անդ, էջ 42:

17 Անդ, էջ 44:

18 Անդ, էջ 52:

19 Անդ, էջ 53-54: Գիշերով **հարսնախոս** գնալը ոչ միայն «չար աչքից» պաշտպանվելու նպատակ ուներ, այլև, մինչև աղջկա կողմի հետ համաձայնության գալը, ձգքում էին այն գաղտնի պահել, որ մերժման պարագային, լուրը չարաբանվեր հասարակության մեջ:

20 Անդ, էջ 54, 57:

21 Անդ, էջ 55: Չնայած Նախշունը քերյակ էր, սակայն համաձայնությունը կայացվում էր առանց նրա մասնակցության:

22 Ն. Ճուղուրյան, Խեչոյի կղացուն, էջ 156:

23 Տե՛ս Ն. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 171-173:

փաստյակ կարմիր ձու, մյուսը՝ թռնիքի մի քանի բլիթ, կապոցով կանաչ սոխ, կանաչ լոբի, սխաբոր, մի քանի կապով փիփերպ²⁴: Դրանք փեղավորեցին խորջիններում, բեռնեցին ավանակներին՝ բարի երթ ասելով գնացողներին: Ավագենց **նշանավորների խումբը**, լի ուրախությամբ, ճանապարհ ընկավ խնամիների փուն: Վարդան պապը ծանր գավազանով գնում էր առջևից, իսկ մյուսները հետևում էին նրան **խոնարհ պապկառանքով**: Նահապետական աշխարհի հայ գերդաստանի այս խումբը, գրում է Ն. Ճուղուրյանը, կարծես թողնում էր այն փայլալուծությունը, թե գյուղի արդարները «Դրախտ են գնում պապի հետ միասին, որպես առաքյալի երևից գնացող մի խումբ հավաքացյալներ»²⁵:

Երբ խնամիները մոտենում են աղջկա հայրական փանը, կանայք ասացին **փախցրեք երեխին** (Նախշունին) և մայրը հարսնացուին փարավ **նեքսափուն**: Վարդան պապն ու իր խումբը ներս մտնելով բարեկեցին խնամիներին, սփռնալով «Աստու բարին ձեր որդոց ըմբրին ու կարմիր արեւին» պատասխանը: Նստելուց հետո, Վարդան պապը դիմում է աղջկա մորը. «Մենք ուզում ենք ձեր օջախը մի փունջ ծաղիկ բերենք, եթե մեր բարեկամությունն արժանի կհամարենք»²⁶:

Մինչ շարունակվում էին երկու կողմերի բանակցությունները, երիտասարդները ներս էին փանում խնամիների բերած խորջինները: Կանայք փռում էին մթերքներով և հարսի ընծաներով առաք **սուփրերը**, իսկ աղջկա կողմի փարեցներն ասում էին. «Աստված շեն պահի խնամուն, շար մարիֆաթով ևն ժաժ եկել»²⁷:

Երկու կողմի համաձայնությունից հետո, քահանան հարցնում է, ի՞նչ նշան եք բերել: Երբ հանում են նշանը, բոլորը ուրբի են կանգնում, սակայն նոր են նկատում, որ հարսը բացակայում է: Մինչև հրաման չտաք չի գա, ասում են աղջկա կողմի կանայք: Կիսաբաց երեսով երևում է Նախշունը, նախ՝ ջուր է լցնում քահանայի, ապա՝ մյուսների ձեռքերին: Երբ նվերները հանձնում են Նախշունին, մասնակիցները գլխարկները հանելով, գոչում են. «Աստված շնորհավոր անի»²⁸:

Նրավիրվածները հարսի համար բերած իրենց դրամները գցում են քահանայի և փանուրների առջև դրված մաքուցարանի վրա, ապա հաշվելով ու ներկաներին հայրներով հավաքած գումարի չափը, հանձնում են հարսնացուին²⁹: Նախշունն ընդունելով դրամը, խոնարհվեց և իր շնորհակալությունը հայրենց ներկաներին: Սակայն նա հյուրերի ներկայությամբ ճաշելու իրավունք չունեի, իսկ մասնակից կանայք, նահապետական բարբերի

24 Տե՛ս անդ, էջ 104: Այլ վկայություններում նման բնույթի նյութեր չեն հանդիպում:

25 Անդ, էջ 64-65:

26 Տե՛ս Ն. Ճուղուրյան, Պեպիկ կինը, էջ 138: Ինչպես ազգագրական, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ, չկա ուրիշ վկայություն, որ փղայի կողմը դիմի այս խոսքերով: Որպես կանոն, աղջկա ձեռքը խնդրողն ասում էր. «Էկել եմ ձեր ճրագից մի կրակ փանեն», «Էկել եմ ձեր օջախից մի բուռ հող փանեն» (տե՛ս Ե. Լալայան, Վայոց ձոր, ԱՄ, գ. 13, թիվ 1, Թիֆլիս, 1906, էջ 144): Կարծում եմ հայոց կենցաղին քաջաբեղյակ Ն. Ճուղուրյանը չէր կարող սխալվել, պարզապես, դիմելու այս ձևը չի գրառվել:

27 Ն. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 180:

28 Անդ, էջ 68, 73:

29 Գրավոր ու դաշտային նյութերի վկայությամբ, նշանադրությունից մինչև հարսանիք ընկած շրջանում, հարսը սփռնում էր դրամական որոշ նվիրավորություն, որը հայրն է **արնագին** կամ **սարիմա** անունով: Ն. Ճուղուրյանի նկարագրած դրամահավաքը, նույնպես մտնում էր արնագին մեջ, որը պարկանում էր հարսին, և որեւէ մեկն այն փոփոխելու իրավունք չուներ:

համաձայն, փղամարդկանցից առանձին էին ճաշում: Խնջույքից հեքո ճանապարհում են հյուրերին, որով ավարտում է **նշանադրության առաջին հանդեսը**³⁰:

Նշանադրեքից հեքո, Աբելն իրավունք չունի իր նշանածի հայրական օջախ այցելել: Այս արգելքը գրառված է ինչպես մասնագիտական, նույնպես և գեղարվեստական գրականության մեջ: Ըստ Ե. Լալայանի հաղորդումների՝ «Թույլ չէր փրվում, որ մինչև անգամ փեսացուն օրը ցերեկով հարսնացուի փան մոտով անցնի»³¹: Երբ Ղ. Աղայանը նշանվելու հաջորդ օրը հաճախում է նշանածին, գոքանչը բարկանալով ասում է. «...դուրս կորիր իմ փանից, ևս թեզ նման երեսքաց փեսա չեմ ուզի»³²:

Նշանադրեքից որոշ ժամանակ անց, ընտանիքի ծերերի թույլությունամբ, Աբելը որոշում է մեկնել սար՝ նշանածի հայրական վրանը: Նաբազարները «բարի մաղթեցին Աբելին գոքաչանց գնալը»: Այն ձորը, որով պեպք է անցնել Աբելը, փարեցների ասելով, ապրում էր մի **ուշար**, վրանգավոր գազան³³: Սակայն Աբելը որոշում է անցնել վրանգավոր ձորով, երգելով ժողովրդական բանահյուսության հեքույալ քառյակները.

Սար գնացի, սար արի,
Լիք խորջինով յար արի.
Յար եմ ջոկել յարի պես,
Յար չեմ ուզել քարի պես:
Թագն ու պսակն ինձ ու թեզ,
Դու էլ ինձ պես նագով ես.
Գլխիդ դնենք թուխ գդակ,
Կարմիր անենք մեր պսակ:
Թագը գլխիդ թագավոր,
Թագը գլխիս թագուհի.
Աստծուն ըլնենք ուխտավոր,
Որ մեր իդձը կարարի:
Ծառի ծերին մի կաղին,
Ուշք ու միտքս ձեր բաղին.
Թռար, գնացիր էդ սարը,
Ոնց որ թղի մարալը:
Ծաղկիս փունջը նախշուն ա,
Յարիս անմն Նախշուն ա.
Յար եմ ջոկել վարդի պես,
Յար չեմ ուզել սարդի պես³⁴:

30 Ն. Ճուղուրյան, նշվ. աշխ., էջ 181, 183:

31 Ե. Լալայան, Բորչալուի գավառ, էջ 125: Նման. Պ. Պոռոչյան, Երկեր, Եր., 1987, էջ 167:

32 Ղ. Աղայան, նշվ. աշխ., էջ 420:

33 Տե՛ս Ն. Ճուղուրյան, նշվ. աշխ., էջ 104-106:

34 Անդ, էջ 108-110:

Նասնելով աներոջ վրանին, Աբելը լսեց շների հաչոցներ³⁵, նա իջավ ձիուց, բարեկեց բռնեցին: Տարեց կանայք համբուրներ դրոշմեցին նրա ճակատին, իսկ Աբելը «համբուրեց ամենի կուրծքն ու ձեռքը»³⁶: Որոշեցին փեսայի շալակը բաց անել, քեննել թե «Մարեա աքիբը ինչպես ա կարել ու կապել»: Պառավները վրանում բար ու բարաքայթով լի խնոցին կախել էին իրար ամուր կցած **չաթմաններից** և հավաքած սերը մեջը լցրել: Նախշունն ու Աբելը բռնելով խնոցու յուղոտ ունկը, մեծ եռանդով սկսեցին **խնոցին հարել ու հարխը փալ**, իրենց հմբությունը ցույց փալով, իսկ Խաթուն փալը մոտենալով խնոցուն, սկսեց երգել.

Նարի ա հարի, ա՛ խնոցի,
Մեջդ ա բարի, ա՛ խնոցի.
Խաշիլ եմ արել, եղ չկայ,
Քոսակ մարդին բեղ չկայ:
Նարից եղը կիթ կանեմ,
Ըխրի պաշար՝ բլիթ կանեմ...
Նարի ա հարի, ա՛ խնոցի,
Մեջդ ա բարի, ա՛ խնոցի...³⁷

Լսելով խնոցու ձայնը, Խաթուն փալն ասում է. խնոցին էլ չի գնգում, **չըլփոցն ընկավ, իմաց ա փալիս, թե եղ եմ դառել**: Երբ գդալով հանեց կարագի բեկորները, ասաց. **հլա կակուղ ա**, պեպք է սառը ջուր լցնենք, որ հավաքվի և յուղոտ գա³⁸:

Աբելը որոշում է գնալ գիշերը քենած գազանի հետքերով: Նանդիպելով արջին, Աբելը մի կողմ քաշվեց, մինչև արջը նորից կմոտենար, նա **չուխեն փաթաթեց կոնակը** և ձեռքը մինչև արմուկը **խրեց արջի բերանը**: Մինչ գազանը «ծամում էր նրա թաթն ու կուրը», որսկանը ձախ ձեռքով մի կերպ դուրս քաշեց դաշույնը և փակեց խրեց արջի սիրտը³⁹: Սպանված արջից Աբելը վերցնելով «մուր երեք փութ հաղություն, գլուխն ու թաթիքները, սապոնի յուղը», լցրեց արջի մորթու մեջ և վերադարձավ վրանը⁴⁰:

35 Նովվի փորձառու շները, ամեն կենդանի արարածի վրա փարբեր կերպ են հաչում. «գիլիաչ, մարդու հաչ և այլն: Նովվիը շան հաչոցից կարող էր գուշակել, թե ինչ քենակ վրանց է մոտենում» (Գրեն անդ., էջ 114):

36 «Ճակատն ու կուրծքը համբուրելը վաղեմի մի առաքինի սովորություն է, մեկը ծնողական, մյուսը՝ որդիական սիրտ ու հնազանդության» (անդ., էջ 115):

37 Անդ., էջ 131-132:

38 Անդ., էջ 133:

39 Անդ., էջ 139: Արջի որսի այդ եղանակին մանրամասնորեն անդրադարձել է Գ. Նալաջյանը (Գրեն Գ. **Նալաջյան**, Դերսիմի հայերի ազգագրությունը. «Նայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)», գիրք 5, Եր., 1973, էջ 158):

Ուշագրավ է, որ Մյունխի ժայռապարկերներից մեկում պահպանված է նման քենարան, որը խոսում է այդ որսածնի հնագույն կիրառության մասին Նայասրանում (Գրեն Գ. **Կարախանյան**, Պ. Մաֆյան, Մյունխի ժայռապարկերները. «Նայասրանի հնագիտական հուշարձաններ» 4, պրակ 1, Եր., 1970, նկ. 30, թիվ 2):

40 Ն. **Ճուղուրյան**, նշվ. աշխ., էջ 139: Գրավոր ու դաշտային նյութերի վկայությամբ, արջի միսն ու մորթին, ինչպես նաև ճարպը լայն կերպով կիրառվում է ժողովրդական բժշկության մեջ, ունենալով փարբեր հիվանդությունների բուժման իրական հիմքեր: Արջի միսն օգտագործվում է հատկապես հոդացավով փառապոլ մարդկանց կողմից, իսկ արջի չորացած լեղին՝ թունավոր լուծի կամ փորացավի դեպքում: Նայ ժողովրդական հավաքալիքներում ընդգծվում է արջի թաթի, եղունգի, ժանիքի օգտագործումը որպես բուժման իրացիոնալ եղանակներ (մանրամասն Գրեն Ա. **Պեպրոպյան**, Արջի պաշտամունքը հայ ժողովրդական հավաքալիքներում. ԲԵՆ, 1995, թ. 3):

Արևը երկար չէր կարող մնալ գոթանչի վրանում, գյուղացիները կասեին **աղջկապուտուն դառավ**⁴¹, ուստի արեղավորվեց իրանց վրանը:

Ավագենց **նշան-տարներին** Շիրինանը պարասխանեցին **նշան-դարձերով**⁴², դրամական նվեր արվողներին հանձնելով հարսնացուի ձեռքով գործած մի-մի նախշուն գուլպա: Նշան-դարձերից հետո, երկու կողմերն էլ սկսեցին նախապարասարվել հարսանիքի:

Բուն հարսանեկան փուլ. Ն. Ճուղուրյանը փվել է հայոց ավանդական հարսանիքի ժամանակ աղջկա հայրական տանը պարասարված հարսի օժիպի (բաժինքի) հետևյալ մանրամասները. փաթեթ գույնի թելերից գործած շուրջ հարյուր գույգ մեծ ու փոքր **գուլ-պա-տրեխներէն**, մի գույգ ջեջիմ, մի գորգ, մի կարպետ, սնդուկ, մի բանի գույգ ձիաթով, նույնքան էլ իշաթով, փաշպը ծածկելու համար մի գույգ մեզար, «իշի փորը քաշելու համար մի չվան», իրձի սելի համար մի գույգ ջեջիմ կամ պարան, չոբանի համար մի աղաման, գարդ ձիու թամբի համար, պղնձե մի կուժ, կերակուր եփելու պղինձ, ճաշ ուտելու համար աման, ջուր խմելու **փուլա**, պղնձե սինի՝ որպես մատուցարան: Զոթանչի կողմից՝ փեսին որպես հարուկ նվեր մի փափագործ չուխա ու շավար, մի գույգ **պանիճ ու կապիչ**, սրնքակապ եւ այլն: Մնում էր միայն մի ձեռք անկողնու պարասարություն, որն արվում էր հարսանիքի **բարրշիքից** հետո⁴³:

Օժիպի պարունակության նման մանրամասն թվարկում քիչ է հանդիպում մինչև իսկ գույք ազգագրական ուսումնասիրություններում⁴⁴: Օժիպը պայմանավորված էր ամուսնացող գույգի ծնողների կարողությամբ: Աղքատ ընտանիքների բաժինքը փղարուն էին տալու միայն, իսկ հարուստներինը՝ սայրով:

Նարսանիքից առաջ փղայի կողմը մի անգամ էլ պետք է այցելեր խնամիկներին, սակայն առանց **սուփրաների**, միայն գերդաստանի երկու սեռերի ոչ մեծ թվով: Երկու կողմերի միջև սկսվում էր հարսանիքի հետ կապված ծախսերի շուրջ սակարկություն: Աղջկա կողմը ասում էր. չնայած մենք աղքատ չենք, բայց **ինչպես աղաթն ա**, պետք է **ամենքի սիրտը շահենք**: Նարսի մոր համար կրեւեր «թանկագին խալաթ ու քառասուն մանեթ էլ կտաք ծծագին»: Զորս հարսների համար կրեւեր մի-մի մաշիկ կամ բաղդարի, անկողին պարասարելու համար՝ **յորդան դոշակի բուրդ**, մաացուի համար՝ մի կով կամ որձ, խմելու համար՝ **երկու թունգի արաղ**⁴⁵:

Տղայի կողմը հիմնականում համաձայնում է այս պահանջներին, «միայն ծծագնումը, մաացումն ու գինումը մեզ շար էք գոռ անում», - ասում է Մարգիս ամին: Նրանց փախով 30 ռ., իսկ մաացու կրեւերն միայն մի կով, գինի՝ վեց թունգի: «Ավագենց պարգամավորները հայրենեցին իրանց շնորհակալությունը **բարրշեքը կամ ոսկոր կոտրեքը** (ընդգծումը՝ Ն. Ճ.) վերջացրին սիրով ու խաղաղությամբ»⁴⁶:

Ընթրիքի ավարտից հետո, Նախշունը փաթ ջուր բերեց, նախ՝ լվաց Մարգիսի, ապա՝

41 Ն. Ճուղուրյան, նշվ. աշխ., էջ 139-140:

42 Անդ, էջ 184:

43 Տե՛ս անդ, էջ 185:

44 Ուշագրավ են Բորջալուի հայերի հարսանիքի օժիպի վերաբերյալ Ե. Լալայանի գրառումները (տե՛ս Ե. Լալայան, Բորջալուի գառա, էջ 137-138):

45 Ն. Ճուղուրյան, նշվ. աշխ., էջ 186-187:

46 Նաճախ **բարրշեքի** ժամանակ, երկու կողմերի միջև լինում է վեճ ու անխաղժություն, երբեմն չնչին բանի համար, խախտում են իրենց բարեկամությունը (անդ, էջ 187):

«սկեսրների ուրբերը եւ աջ ուրները համբուրելով, ըստ սովորության, ստացավ նրանց **ոսր-նալվացնք արասիները**, նրանց փալով նոր գուլպաներ» (ընդգծումը՝ Ա. Պ.)⁴⁷:

Ն. Ճուղուրյանը մանրամասնորեն նկարագրել է հարսանքապուրը: Այն **կոնդ** գերաններով եւ անհարթ փարդիներով ծածկված, հին նահապետական օջախավոր փուն էր: Ծխից սևացած գերանները մի բանի փարի առաջ փռվի ունեցած հարսանիքից հետո, առաջին անգամ էին մաքրել: Նարսներն ու աղջիկները մաքրելով սևացած պարերը, կրաջուր ցանելով, առաջացրել էին **փրպփրպուրիկ կամ պըրպըրուրիկ նկարներ**⁴⁸:

Պարերի փակ, պարվալոր հյուրերի համար գորգեր ու կարպետներ էին փռել, իսկ հասարակ հյուրերի համար՝ քեչաներ: Պարերից մեկի առաջ, հարակից քիչ բարձր, փեսայի համար թախար էին պարարասրել, իսկ **նեքսափանը** հարսի համար՝ առագաստ: Պարերին կախել էին **կախանաուր եւ ձիթավառ ճրագներ**, իսկ գոռնաչիները շարունակում էին փչել իրենց **հրաւէր-եղանակին**⁴⁹: Նարսանքապուրն այս նկարագիրն իր փեսայի մեջ եղակի է ոչ միայն գեղարվեստական, այլև մասնագիտական գրականության մեջ եւ արժանի է ուշադրության:

Ն. Ճուղուրյանը մանրամասնորեն անդրադարձել է հարսանյաց ճաշարեսակներից: Ուրբաթ օրվանից սկսած, սեղանի գլխավոր **կերակուրներն** էին լոբին ու կարպոֆիլը, որը պարարասրում էին երկու եղանակով՝ ձեթով փապակած եւ ջրալի: Սովորաբար, գրում է Ն. Ճուղուրյանը, հարսանիքի սկիզբը ուրբաթ օրվանից էր սկսվում⁵⁰, հետևյալ օրերում կերակուրները պատու չէին լինում:

Տանուրերը պահանջում է խոհարարներից ճաշը մատուցել, սակայն ստանում է հետևյալ պարասխանը. «Պղնձի խփերը սառել են ու պինդ կպել, պոկ չեն գալիս, մինչև որ քո հրամանը չլինի»⁵¹, «Մեր աղաթն էս ա, պերք ա փաս, որ բացվեն պղինձները»⁵²: Տանուրերը ծիծաղելով ձեռքը փարավ գրպանը, հանեց 20 կոպեկ, փռեց խոհարարներին, որ **սառույցները հալեցնեն**: Քեֆը սկսվել էր, սակայն **թագավորը թախարին չէր**, մասնակիցները հրավիրեցին նրան ու քավորին: Շնորհավորեցին փեսայի կանաչ-կարմիրը եւ ուղեկցեցին իր թախարը, որպեսզի նստի էր մի մանուկ եւ վեր չէր կենում: Մա իր **խալաթն էր պահանջում** (ընծա), որն ստանալուց հետո, զիջեց իր փռը⁵³:

Նարսանքավորները շուրջով ուղեւորվում են **աղջկափուն**, սակայն հասնելով խնամու փան սրահին, կանգ են առնում: Դուռը բաց չեն անում, **դռնապանը խալաթ էր պահանջում**: Դեռ չէին **շարաշ** էր աղաղակում, իր բաց արած բերանը սրան-նրան դեմ անելով եւ կոպեկները ներս ընդունելով⁵⁴, իսկ մականները շեմի առաջ պարում էին: Ստանալով խա-

47 Անդ, էջ 188:

48 Անդ, էջ 201: Նարկայես փունական օրերին այլուրով հայկական գլխափան պարերն ու առասարաղը զարդարելն ուներ զանգավաճային կիրառություն: Կիսախավար բնակարանում այն թողնում էր աստղազարդ երկնքի փալավորություն, որը ժողովրդական հավատալիքներում կապվում է աստղերի պաշտամունքի հետ (սրեն Ա. Պետրոսյան, Դաշրային ազգագրական նյութեր, փերր 33, Մարտունի):

49 Ն. Ճուղուրյան, նշվ. աշխ., էջ 200:

50 Առաջին ուրբաթ երեկոյան «ուզեցին հարսանիքի սառը վեր հանել» (սրեն Ն. Ճուղուրյան, Խեչոյի կղացուն, էջ 157-158):

51 Ն. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 204:

52 Ն. Ճուղուրյան, Խեչոյի կղացուն, էջ 162:

53 Տրեն Ն. Ճուղուրյան, Շիրինանց Նախշունը, էջ 205:

54 Տրեն անդ, էջ 207: Ինչքան մեզ հայրնի է, **շարաշ** փալու այս եղանակը չի գրառվել գրավոր ու դաշրային ազգագրական նյութերում:

լաթը՝ դժնապանը բացեց դուռը, և մասնակիցները սկսեցին պարբերաբար վերադառնալ **հանդերձ օրհնանքի**⁵⁵:

Փեսան ու հարսը, խաչեղբայրը թափորի հետ ուղևորվեցին եկեղեցի, որպեսզի կապեցին գույգի **կանաչ-կարմիրը նարոտով**⁵⁶ և գլուխներին **թագ դնելով**, վերադարձան աղջկապուն⁵⁷: Այն ճանապարհը, որպեսզի անցնում էր հարսանիքի թափորը, բարեկամներն ու խնամիկները մարտցարանով առաջ էին ելնում, **մեղրով քաղցրացրած ձվածեղ մարում** և շնորհավորում նորապսակների թագն ու պսակը⁵⁸:

Աղջկա փանր բոլորը ուրում-խմում են, իսկ թագավորը պաս պահածի նման ոչինչ չէր վայելում, նա աներոջ կողմից **բերանբացեցի** էր սպասում: Մասնակիցները հիշեցնում են աներոջը, թե «փան փեր, չես մտքեցնում, թագավորի հացը չես կտրում» (մտքեցիք և հաց կերցրո): Շամուն մոտեցավ թախսին, չոքեց փեսայի առաջ և ձվածեղը լավաշի մեջ փաթաթելով, նախ, ինքը կերավ, հետո առաջադրեց փեսային, իսկ վերջինս ավելի հույսով կերավ շրթունքները⁵⁹: - Բնձո՛ւ չես ուրում,- ասում է աները,- չէ՞ որ «երկարանի խամ երինջ եմ փվել քեզ, էլ ի՞նչ ես ուզում»: «Տալիքդ վախսին քուր փեսները»,- պահանջում են մասնակիցները: Շամուն հայրաբարում է. ընծայում եմ մի չորքոսանի երինջ, ձիու մի էգ քուռակ՝ որպես **բերանբացեց**⁶⁰:

Այդ ընթացքում Նախշունի օժիպը մեկ-մեկ դուրս են բերում և բարձում սայլին ու ձիուն: Զուռնեն **«ձիառորի կամ փրիթի էր ածում»** (ընդգծումը՝ Ն. Ճ.): Տեղի էին ունենում փարբեր մրցումներ, ձիավարության ճարպիկ հնարքներ: Մրցառուջ է Նախշունի հրաժեշտին իր հայրական օջախին, բաժանվելը փանից ու մայրական գրկից: Նա հեկեկում էր ամբողջ մարմնով, «ամբողջությամբ արտասուք էր դարձել»: Երբ լաց է լինում Նախշունի պապը՝ նրան կշարմրում են «Ներ օրհնած, հո թողանդ Միքիլ չես ուղարկում» խոսքերով. օրհնի, թող օջախը համբուրեն և ճամփա ընկնեն⁶¹: Նանես պապի օրհնանքից հետո, նորապսակները «երեք անգամ ծնրադրությամբ համբուրեցին օջախի սուրբ բարը»: Թափորն ուղղվեց դեպի փղափուն, դիմավորելով և շնորհավորելով նրանց, **թագուհու գլխին գցում են խալաթներ**⁶²:

Ն. Ճուղուրյանի վկայությամբ, Ավագենց հարսանիքը **կանչով կամ շիլիքով**⁶³ էր: Երբ

55 Նանդերձ օրհնանքը համարվել է մեր ավանդական հարսանիքի կարևոր ու պարբերաբար միջոցառումներից մեկը:

56 **Նարոտի** պարբերաբար, գույգի նկարմամբ որպես ժամանակավոր արգելքի կիրառման և այլ մանրամասները տես **Խ. Մամուլյան**, Նին Նայասարանի կուլտուրան, հ. 1, Եր., 1941, էջ 345:

57 Պսակից հետո կրկին աղջկա փուն գնալու սովորությունը շար փեղերում փոխվել է, գույգը եկեղեցուց ուղղակի **փղափուն** է դառնում: Պսակափեղից **աղջկափուն** հասնելով և նվերներ ստանալով, գույգին անմիջապես բաժանում են իրարից, թագուհուն՝ իր առագաստը, թագավորին՝ իր թախսը: Այդպես էին վարվում նաև փղափունը (տես **Ն. Ճուղուրյան**, նշվ. աշխ., էջ 208-209):

58 Տես անդ., էջ 208:

59 Տես անդ., էջ 209:

60 Տես անդ., էջ 210: **Բերանբացեցի** առավել մանրամասները տես **Ե. Լալայան**, Բորչալուի գավառ, էջ 135:

61 **Ն. Ճուղուրյան**, նշվ. աշխ., էջ 211-212:

62 Տես անդ., էջ 213: Այդ խոսքերի փակ Ն. Ճուղուրյանը նկատի ունի հարսի գլխին քաղցրավենիք, չոր մրգեր շաղ պալը: Այն ընդհանրական է եղել մեր հարսանիքների համար, խորհրդանշելով առաքություն և պաղաբերություն, որն առկա է նաև մեր օրերում:

63 **Շիլիք** բառը գյուղացին դարձրել էր **շիլիք**: Շիլիքով հարսանիք անում էին նրանք, ովքեր մեծ ծախսերի հնարավորություն չունեին: Շիլիքն արվում էր փոխադարձ հարուցմամբ: Իր որդու հարսանիքին հիշելիք կամ նվեր ստացողը, պարբերաբար էր փոխարենը հարուցել փողի երեխայի հարսանիքին (տես անդ., էջ 214):

